

ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ՇԱՐԱՀՅՈՒՄՈՒԹՅԱՄԲ ՊԱՅՄԱՆԱԿՈՐԿԱԾ ՀԻՄՆԱԿԱՆ ԴԺՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԲԱՆԱԿՈՐ ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Տվյալ հոդվածում կքննարկվեն մի շարք խնդիրներ, որոնք ծագում են ընդհանրապես բանավոր, և մասնավորապես հաջորդական թարգմանություն կատարելիս: Բանն այն է, որ հաջորդական թարգմանությունը, ի տարբերություն բանավոր թարգմանության այլ տարատեսակների, իրենից մենախոսություն է հիշեցնում, ուստի թարգմանչի աշխատանքի որակի մասին դատում են նրանով, թե վերջինս ինչպես է ձևակերպում լեքային հաղորդումը:

Թարգմանչի խոսքը պետք է լինի հստակ, տրամաբանական, առանց անհարկի կրկնությունների, ավելորդ բառերի և այլն:

Թարգմանության ընթացքում լուրջ խնդիրներ կարող են ծագել՝ պայմանավորված տարբեր լեզուների շարահյուսական տարբեր համակարգերով:

Կրկնությունները, վերադարձն արդեն իսկ ասվածին հետևանք են նախադասության բարդ շարահյուսական կառուցվածքի: Հայերեն լեզվով նախադասության շարահյուսական կառուցվածքն այն աստիճանի է տարբերվում անգլերեն լեզվով նախադասության շարահյուսական կառուցվածքից, որ նախադասությունն անընդհատ փոփոխելու, վերածնակերպելու կարիք է զգացվում:

Ի տարբերություն գրավոր թարգմանություն իրականացնողների, որոնք չունեն ժամանակի սահմանափակում և կարող են առանց շտապելու դասավորել նախադասության անդամներն ըստ հերթականության, բանավոր թարգմանիչը հարկադրված է սկսել իր խոսքը՝ պատկերացում չունենալով, թե ինչպիսի շարահյուսական զարգացում կունենա հոնտոդի ելույթը, և հետևաբար վերջինս պետք է հնարավորինս զգուշավորություն ցուցաբերի, նախքան հախուռն կերպով առաջ անցնելը: Հարկավոր է փորձել, որքան հնարավոր է շրջահայաց լինել և կռահել նախադասության հետագա ընթացքը: Շատ հաճախ բնագրի և թարգմանվող լեզվի միջև առկա շարահյուսական հսկայական տարբերությունները կարող են հանգեցնել մի իրավիճակի, երբ խոսքի արագ տեմպի պարադայում թարգմանչի տեսադաշտում հայտնվում են ավելի կոնկրետ, ավելի ամբողջական կառուցվածքներ, և հետևաբար թարգմանությունը շատ ավելի ճշգրիտ է ստացվում, քան խոսքի դանդաղ տեմպի դեպքում:

Բանավոր թարգմանության ժամանակ, ի տարբերություն գրավորի, թարգմանիչը հիմնականում ոչ թե դիմում է բառափոխումների, այլ վերադա-

սավորում է նախադասության կազմը, հակառակ դեպքում անգլերեն խոսքը չի համապատասխանի ընդունված կանոններին:

Լ. Ա. Չերնյախովսկայան նշում է «երբ թարգմանիչն ուշադրություն է դարձնում միայն լեզվական և քերականական համապատասխանություններին, ապա, ի վնաս շարահյուսական դժվարությունների՝ ծնվում է թարգմանչական լեզու, որտեղ, թվում է՝ բոլոր բառերը ճիշտ տեղում են, և նախադասության քերականական կառուցվածքում չկա ոչ մի սխալ, սակայն, այդուհանդերձ ինչ-որ բան այնպես չէ»:

Այստեղից կարելի է ենթադրել, որ մայրենի լեզվի շարահյուսական համակարգը մեծապես կարող է ազդել թարգմանության որակի վրա: Ուստի, երկու լեզուների միջև առկա կառուցվածքային և շարահյուսական տարբերությունների իմացությունը կարող է օգնել թարգմանչին նման խոչընդոտները հաղթահարելու գործում:

Բոլոր լեզվաբաններին քաջ հայտնի է, որ հերթականությունը, որով բառերը հասնում են հասցեատիրոջը, չի սահմանափակվում միայն քերականական իմաստով:

Քննարկենք հայերենի, ռուսերենի և անգլերենի շարահյուսական առանձնահատկություններից մի քանիսը, որոնց լավ իմացությունը և ճիշտ կիրառումը մի քանի անգամ ավելի դյուրին կդարձնի բանավոր թարգմանչի աշխատանքը:

Ինչ վերաբերում է շարադասությանը, ապա ռուսերենում և հայերենում այն ընդհանուր առմամբ՝ ազատ է, իսկ անգլերենում կայուն՝ պայմանավորված այդ լեզվում հոլովական վերջավորությունների բացակայությամբ: Հետևաբար բառերի միջև առկա շարադասական կապը որոշվում է ոչ թե վերջիններիս քերականական ձևով, այլ նախադասության մեջ բառի դիրքով: Այն հանդիսանում է նախադասության ենթակայի և լրացման տարբերակման միակ միջոցը:

Օրինակ՝ Mrs X sent the little boy a little message.

The little boy sent Mrs X a little message.

Այսպիսով անգլերենի շարադասությունը հազվադեպ է հնարավոր չորջել՝ միաժամանակ պահպանելով նախադասության իմաստը, ինչը չի կարելի ասել հայերենի և ռուսերենի մասին: Հայերենում և ռուսերենում, ի տարբերություն անգլերենի, նախադասությունը կարող է սկսվել ստորոգյալով, լրացումով, իսկ ենթական կարող է ի հայտ գալ նախադասության վերջում միայն, ինչը համընթաց թարգմանչի համար մի ամբողջ հավերժություն է:

Համեմատվող երեք լեզուներում էլ շարադասությունը քարացած չէ և ենթարկվում է որոշակի կանոնների: Այստեղից կարելի է եզրակացնել, որ բանավոր թարգմանիչը պարտավոր է իմանալ բնագրի և թարգմանության

լեզուների շարահյուսական հիմնական առանձնահատկությունները՝ թարգմանության ժամանակ նման շարահյուսական դժվարությունները անարգել հաղթահարելու համար:

Շարահյուսական դժվարությունների պատճառ կարող են հանդիսանալ նաև բառի հոլովված ձևերը: Հոլովական վերջավորությունները կարող են երկիմաստ, երբեմն էլ բազմիմաստ լինել՝

Օրինակ "Отношение описывает уравнение".

"Հարաբերությունը նկարագրվում է

հավասարման միջոցով":

Այսպիսի դեպքերում օգնության է գալիս համատեքստը, և միայն փոքր համատեքստի իմացությամբ կարելի է պարզել, թե որն է ուղղական և որը հայցական հոլովով գործածված:

Թարգմանիչը պետք է զգա ինչպես հնչերանգային կենտրոնների տեղաշարժը և շարահյուսական շրջադասության միջև առկա կապը, այնպես էլ տրամաբանական շեշտի տեղաշարժերը, որոնք բառերի շարադասության փոփոխության արդյունք են:

Տեսականորեն ռուսերեն կամ հայերեն մեկ նախադասությունը թարգմանվելիս անգլերենում կարող է ունենալ հինգից վեց շարահյուսական տարբերակ, սակայն ժամանակի սղության պատճառով թարգմանչին հաջողվում է դիտարկել դրանցից երկուսը կամ, լավագույն դեպքում, երեքը: Թարգմանիչը, երկար մտածելով հնարավոր տարբերակների շուրջ, կարող է բաց թողնել հոնտորի խոսքի հաջորդ հատվածը, հետևաբար նա պետք է ուշադրությամբ հետևի ելակետային լեզվի նախադասությունների շարադասությանը:

Օրինակ, փոխելով հայերենում "չ", իսկ ռուսերենում "վա" ժխտական մասնիկի տեղը, հիմնովին փոխվում է նախադասության իմաստը՝

Он не может прийти.

Նա չի կարող գալ:

He can't/isn't able to come.

Он может не прийти.

Նա կարող է չգալ:

He may not come.

Ինչ վերաբերում է նախադասությունների շարադասությանը, ապա թարգմանիչը մտքի մեծ ճկունություն պետք է ցուցաբերի՝ պատրաստ լինելով գոյականը փոխարինել բայով և հակառակը, ներգոյական սեռի բայը դարձնել կրավորական և հակառակը, խոսքի մեջ ներմուծել անդեն կառուցվածքներ, բաց թողնել որոշ բառեր, փոխել նախադասության բաղադրիչ մասերի տեղերը՝ միաժամանակ շարունակելով լսել հոնտորին և թարգմանել:

Այս բոլոր գործողությունների միաժամանակ կատարումը պահանջում է կարճատև հիշողության մեծ լարվածություն: Սա այնպիսի լուրջ ծանրաբեռնվածություն է առաջացնում, որ այս բնագավառի ռուս անվանի գիտնական

Գ. Վ. Չեռնովին բառերի շարադասության և նախադասության վերածնափոխման խնդիրը գործնականում նույնիսկ անիրագործելի է թվում: Ըստ Գ. Վ. Չեռնովին այս դեպքում առաջ է գալիս համընթաց թարգմանչի օպերատիվ հիշողության ծավալի ընդլայնման և գերծանրաբեռնվածության վտանգ:

Գրավոր տեքստի առկայության դեպքում թարգմանիչը կարող է խուսափել նման խառնաշփոթ իրավիճակներից՝ համարակալելով բառերը կամ նախադասության բաղադրիչ մասերը ըստ այն հերթականության, որով այն պետք է ձևակերպվի թարգմանվող լեզվով:

В настоящее время/ в политической жизни Афганистана/ происходят/ важные перемены.

Ներկայումս Աֆղանստանի քաղաքական կյանքում կարևոր փոփոխություններ են տեղի ունենում:

At the present time/ important changes/ are occurring/ in the political life of Afghanistan.

Շարադասության հետ կապված տարբերությունները տարբեր լեզուներում հաճախ բացատրվում են "թեմա" և "ռեմա" հասկացություններով: Թեման, որը ներկայացնում է "հիմ" կամ արդեն հայտնի հաղորդումը նվազագույն իմաստաբանական ծանրաբեռնվածությամբ, սովորաբար համապատասխանում է ռուսերեն և հայերեն նախադասության ստորոգյալին և հանդես է գալիս նախադասության սկզբում, մինչդեռ ռեման, կրելով "նոր" կամ "անծանոթ" տեղեկատվություն և նախադասության իմաստային մասն ապահովելով, ի հայտ է գալիս նախադասության վերջում և համընկնում է նախադասության ենթակայի հետ:

Անգլերենում նախադասությունը թեմայի և ռեմայի տրոհելիս (որը կոչվում է նաև գործառնության տրոհում) տեղի է ունենում հակառակ երևույթ. ենթական, որն արտահայտում է թեման, գտնվում է նախադասության սկզբում, իսկ ստորոգյալը՝ ռեման, վերջում:

Օրիակ՝ Вспыхнула война.

Պատերազմն սկսվեց:

War broke out.

Թարգմանության ժամանակ չի բացառվում ոչ անցողական բայի փոխարինումը անցողական բայով, ինչպես օրինակ հետևյալ նախադասությունում, որտեղ անդեն ենթական փոխարինվել է դիմավոր ենթակայով.

В этом году было построено тридцать школ.

Այս տարի կառուցվել է երեսուն դպրոց:

This year the town/ city built thirty schools.

Շարահյուսությամբ պայմանավորված բազմաթիվ խնդիրները հաղթահարելու համար թարգմանիչը պետք է կարողանա գործի դնել մասնագիտական բոլոր հմտությունները:

Այս խնդրում մեծ է նախապատրաստական վարժությունների դերն ու նշանակությունը: Հատկապես մեծ ուշադրություն է դարձվում լեզվական և խոսքային արդյունավետ գործունեությունը զարգացնող վարժությունների վրա: Այս նպատակով լսարանում լայնորեն կիրառվող հարց-պատասխան վարժությունները բավարար չեն և դրանց զուգահեռ պետք է կատարվեն լեզվական և իմաստային, կամ իմաստային հենարաններով վարժություններ:

Լեզվական վարժությունների նպատակը լեզվական հմտությունների ծնավորումն է, մինչդեռ խոսքային վարժությունների նպատակն է զարգացնել ուսանողի կամ ապագա թարգմանչի խոսքային կարողությունները:

Լեզվական վարժությունների մի մասը կրում է ստեղծագործական բնույթ՝ բարձրացնելով ուսանողների մտավոր ակտիվությունը և նյութի յուրացման արդյունավետությունը:

Բանավոր թարգմանության դասերին լեզվական ռեպրոդուկտիվ վարժություններից ամենից հաճախ կիրառվողներն են՝ կրճատում (compression), փոխակերպում (transformation):

Ռեցեպտիվ- լեզվական վարժություններից հատկապես արդյունավետ են՝ խմբավորում, կապակցում, կռահում, թարգմանություն:

Հատկապես ցանկանում ենք ընդգծել լեզվական ռեպրոդուկտիվ վարժություններ կատարելու անհրաժեշտությունը լսարանում՝ առանձնահատուկ ժամանակ հատկացնելով փոխակերպումներին, քանի որ տարաբնույթ շարահյուսական կաղապարների ստեղծումը և տարբերակների առաջադրումը հետագայում վերջիններիս մեծապես կօգնեն իրենց դժվարին աշխատանքում:

Վերոնշյալ վարժությունները թույլ են տալիս հիմնականում հաղթահարել ծագած դժվարությունները, սակայն, նույնիսկ փորձառու թարգմանիչներն ապահովագրված չեն սխալներից:

Օգտագործված գրականության ցանկ

1. Р.К. Миньяр – Белоручев; Последовательный перевод, Воениздат, 1969
2. W. Kaiser; Selection and training of conference Interpreters. 1987
4. Линн Виссон; Синхронный перевод с русского на английский. "Р.Валент", 1999
5. Մ.Գ. Աստվածատրյան; Օտար լեզուների դասավանդման մեթոդիկա. Եր., Լույս, 1985թ.